ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՎԵՐՆԵՐ[1]

ՍՈՒՐԲ ԵՐԸՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

«Այսպէս հաւատամք եւ խոստովանիմք զՍուրբ Երրորդութիւնն ի միաւորութիւն անդ՝ առանց խառնակութեան, նոյնպէս զսուրբ Միաւորութիւնն յերրորդութիւն անդ՝ անհատաբար եւ անսկզբնաբար եւ անբաժանաբար: Քանզի որպէս անխառնելի է Սուրբ Երրորդութիւնն, այնպէս եւ անբաժանելի. անխառնելի է յաղագս իւրաքանչիւր յատուկ բնութեանն, իսկ անբաժանելի, վասն զի ամենակալ է Հայր, ամենակալ է Որդի, ամենակալ է եւ Հոգին Սուրբ՝ անորոշաբար, մշտնջենաբար»[2]:

Ս. Երրորդության վարդապետությունը, անշուշտ, դժվար ըմբռնելի է, եւ առանց համապատասխան պատրաստվածության, սուրբգրային գիտելիքների իմացության այդ անդրանցական (transcendental) ուսմունքը անհնար է պատկերացնել: «Երրորդություն» եզրն առաջին անգամ (180 թ.) օգտագործել է Թեոփիլոս Անտիոքացին՝ հունարեն τριάς ձեւակերպմամբ, սակայն Սուրբ Երրորդության կամ առանձնակի՝ նրա Անձերից յուրաքանչյուրի հայտնության բազմաթիվ սրվերական օրինակներ տրված են Հին Կտակարանում, որոնց կանդրադառնանք[3]:

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին երեք անձեր են, բայց ոչ երեք Աստվածներ: Նրանք մեկ եւ նույն Աստվածն են: Իրենց բնությամբ եւ հատկություններով, իրենց կամքով ու գործով, իրենց կարողությամբ եւ իշխանությամբ նույնն են նրանք, բայց իրենց ներքին կապերով եւ հարաբերություններով տարբերվում են, առանց երբեք շփոթվելու իրար հետ[4]: Այս է Սուրբ Երրորդության մասին քրիստոնեական համառոտ պատկերացումը:

Եհովայի վկաները ժխտում են նման պատկերացումները, համարելով դրանք, ինչպես արդեն նշել ենք, միանգամայն սատանայական, հեթանոսական, եւ բերում են մի

1 Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Թ.:

2 «Կնիք հաւատոյ», հրատ. Կարապետ եպս., Ս. Էջմիածին, 1914, էջ 72:

3 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 332:

4 **Զարեհ արք. Ազնաւորեան**, Մեկնութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հաւատամքին, Հալէպ, 2008, էջ 62:

շարք սուրբգրային համարներ, համաձայն որոնց, նրանց ընկալմամբ, Ս. Երրորդության ուսմունքը անընդունելի է: Նրանց հիմնական փրամաբանական հենքը, թվաբանական լեզվով ասած, այս է. 1+1+1=3 եւ ոչ թե՝ 1+1+1=1, ինչպես ասում են քրիստոնյաները: Մինչդեռ, այդ իսկ լեզվով ասած, քրիստոնեական պատկերացմանը մոտ է այս պնդումը՝ 1x1x1=1, որն, անշուշտ, չեն ուզում տեսնել բրուկլինյան վարդապետները:

Ս. Երրորդության վերաբերյալ նրանց տեսակետն արտահայտված է «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը» գրքույկում, ուր հավաքված են նրանց տեսակետներն արտահայտող զանազան աղբյուրներ, անգամ Եկեղեցու հայրերից, որոնք, իբր իրենց տեսակետներն են արտահայտել եւ չեն հավատացել Երրորդության վարդապետությանը: Գրքույկում նրանց բերած գրեթե բոլոր հղումները աղավաղված են, կամ միտումնավոր սխալ են մեջբերված[5]:

Բրուկլինյան վարդապետները հիմնականում մերժում են Երրորդության վարդապետությունը առաջ քաշելով մի քանի պնդումներ, որոնք կներկայացնենք ստորեւ:

ա. Համաձայն Եհովայի վկաների՝ Երրորդության գաղափարը մարդկային ճանաչողության սահմաններից դուրս է եւ անհնար է պատկերացնել, այն «մարդկային ըմբռնողունակությունից վեր է»[6]:

Այս տրամաբանությունը հիմնավոր չէ. մարդկային ըմբռնողունակությունը շատ բաներ ի վիճակի չէ հասկանալ, մասնավորաբար, Աստծու էության հետ կապված շատ ու շատ հարցեր: Սակայն դա չի նշանակում, որ այն ընդունելի չէ եւ սատանան է հղացել այդ գաղափարները: Օրինակ, Պողոս առաքյալն այսպես է գրում Աստծու իմաստության մասին. «Օ, խորություն Աստծու հարստության, իմաստության եւ գիտության: Ինչքան անքննելի են նրա դատաստանները, եւ անգննելի՝ նրա ճանապարհները: Արդարեւ ով իմացավ Տիրոջ միտքը . . .» (Հռոմ. ԺԱ. 33):

Շատ է տարածված աղանդավորների մեջ նաեւ հետեւյալ պնդումը.

բ. Երրորդություն բառը բացակայում է Ս. Գրքում, հետեւաբար ընդունելի չէ[7]:

Այս տեսակետն էլ տրամաբանական չէ, քանի որ շատ ու շատ բառեր, եզրույթներ կան, որոնք բացակայում են Ս. Գրքում, սակայն դա չի նշանակում, որ այդ բառերը, սկզբունքները անընդունելի են: Ի միջի այլոց այդ տեսակետն են պնդում նաեւ աղանդավորական շատ շարժումները, որոնց թվում է, թե այդ կերպ հավատարիմ են մնում հայտնի «sola scriptura» բանաձեւին[8]:

«Երրորդություն» բառը աստվածաբանական եզր է, որ նկարագրում է սուրբգրային բազում վարդապետություններից մեկը: Բրուկլինյան վարդապետները, ըստ այդմ, մերժում են նաեւ այդ բառով արտահայտված Աստծո էությունը: Այս տրամաբանությամբ սուրբգրային չեն բազմաթիվ եզրեր, որոնք օգտագործում են հենց իրենք՝ Եհովայի վկա-

5 Այս թեմային մանրամասն անդրադարձել է Խորեն աբգ. Առաքելյանը իր՝ «Սուրբ Երրորդության մասին՝ «Եհովայի վկաների» ուսմունքի քննադատությունը» գրքում (Ս. Էջմիածին, 2010):

6 «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», էջ 4 :

7 Անդ, էջ 5:

8 ԺԶ. դարում՝ Ռեֆորմացիայի շրջանի կոչերից, որը հռչակում է ընդունել միայն Ս. Գիրքը, եւ մերժել Ս. Գրքից դուրս ամեն ինչ:

ները: Ս. Գրքում բացակայում է իրենց հոչակած Աստծո անունն անգամ՝ «Եհովա» անվանումը[9], չկան «կազմակերպություն», «Թագավորության սրահ» եւ այլ բառեր:

գ. Եհովայի վկաները պնդում են, թե մարդկանց մեծ մասը պատկերացում չունի այդ ուսմունքի մասին, իսկ Եհովան «խռովության Աստված չէ» (Ա. Կորնթ. ԺԴ. 33)[10]:

Նախ նշենք, որ մեջբերումը կապ չունի Երրորդաբանական պատկերացումների հետ, եւ բովանդակային առումով բնագրից կտրված դատողությունները անհեթեթությունների կարող են հանգեցնել: Կորնթոսի եկեղեցում տիրող խժդժություններին վերաբերող հատվածը չի կարելի վերագրել որեւէ ուսմունքի կամ աստվածաբանական գաղափարի: Առաքյալն այդտեղ ուզում է ասել, որ Աստված խաղաղության եւ ներդաշնակության Աստված է, եւ եկեղեցին էլ, նրան նմանվելով պետք է լինի խաղաղության եւ ներդաշնակության վայր, ու ոչ թե՝ խռովության:

Այն փաստը, որ մենք ինչ-որ մի բան չենք հասկանում կամ պատկերացնում, դեռ չի նշանակում, որ այն մերժելի է: Նման դրամաբանությամբ մերժելի կարելի է համարել փրկագործության խորհուրդը, Աստծո մարմնանալը, ջրից ծնվելը եւ այլ աստվածաբանական սկզբունքներ ու գաղափարներ: Պողոս առաքյալը այդ փաստը նշել է այսպես.

«Այժմ տեսնում ենք աղոտ, ինչպես պատկերը հայելու մեջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դեմառդեմ» (Ա. Կորնթ. ԺԳ. 12):

Սա նշանակում է, որ մենք ի վիճակի չենք Աստծո բոլոր խորհուրդները հասկանալու ամբողջապես: Ավելին, Ս. Գիրքը սովորեցնում է, որ մարդ ի վիճակի չէ հասկանալու ամեն բան Աստծու մասին, մեր սահմանափակ միտքը չի կարող ընկալունակ լինել անսահմանափակին ամբողջապես: Եսայի մարգարեն գրում է.

«Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին, եւ ոչ էլ իմ ճանապարհները՝ ձեր ճանապարհներին,- ասում է Տերը, - այլ, ինչպես երկինքն է հեռու երկրից, այնպես էլ իմ ճանապարհներն են հեռու ձեր ճանապարհներից, եւ իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից» (Եսայի, ԾԵ. 8-9):

Հետեւաբար բերված փաստարկն անհիմն է:

դ. «Մատթեոսի ԻԸ. 19-ն ասում է. Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, մկրտեցեք նրանց Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Արդյոք այս համարները ասո՞ւմ են, թե Աստված, Քրիստոսը եւ սուրբ հոգին եռանձնական աստվածություն են կազմում, որ երեքը համահավասար են էությամբ, հզորությամբ ու հավերժությամբ: Ոչ, ճիշտ ինչպես երեք մարդու անուններով թվարկելը, օրինակ՝ Սամվել, Գրիգոր եւ Սահակ, չի նշանակում, որ այս երեքը մեկ են»[11]:

Մատթեոսի ավետարանի այդ համարների հունարենն է՝

19 πορευθέντες οὖν μαθητεύσατε πάντα τὰ ἔθνη βαπτίζοντες αὐτοὺς εἰς ὀ ὄνομα τοῦ πατρὸς καὶ τοῦ υἱοῦ καὶ τοῦ ἁγίου πνεύματος 20 διδάσκοντες αὐτοὺς

9 Այդ անունը տեքստագրամատոնի սխալ ընթերցանության հետեւանք է, որի մասին կխոսենք հետագայում:
10 «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», էջ 5:
11 Անդ, էջ 23:

τηρεῖν πάντα ὅσα ἐνετειλάμην ὑμῖν• καὶ ἰδού, ἐγὼ μεθ' ὑμῶν εἰμι πάσας τὰς ἡμέρας ἕως τῆς συντελείας τοῦ αἰῶνος Ἀμήν

Այս հատվածում Քրիստոս հրամայում է առաքյալներին բոլոր ազգերին մկրտել Մեկ Անունով /այստեղ անուն բառը՝ ὄνομα եզակի թիվ ունի եւ τὸ հոդ/ - Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու: Այսինքն՝ այս Երեք Աստվածային Անձերն ունեն մեկ Անուն - ԱՍՏՎԱԾ: Ընդ որում բոլոր Երեքն էլ ունեն τοῦ հոդը: Այս փաստը կարեւոր է, քանի որ Եհովայի վկաները, հակառակվելով այս համարին, հակափաստարկ են բերում Ծննդոց գրքից՝ նշելով ԽԸ. 16 համարը.

«Հրեշտակը, որ փրկեց ինձ ամեն տեսակ փորձանքներից, թող օրհնի այս մանուկներին, թող սրանց մեջ վերապրի իմ անունը եւ իմ նախնիների՝ Աբրահամի ու Իսահակի **անունը**, նրանք օրհնյալ լինեն երկրի վրա եւ շատ բազմանան»[12]:

Այստեղ էլ անուն բառը եզակի թիվ ունի եւ հոդ՝ τὸ ὄνομα: Եհովայի վկաները, նկատի ունենալով այս փաստը, ասում են, որ այդ դեպքում Աբրահամին ու Իսահակին էլ կարելի է նույնացնել: Բայց այստեղ կառուցվածքը տարբեր է Մատթեոսի համապատասխան հատվածից. ... τῶν πατέρων μου Αβραὰμ καὶ Ισαακ... եւ հոդը դրված է «նախնիներ» բառի առաջ՝ τῶν πατέρων, եւ հոդ չունեն «Աբրահամ» եւ «Իսահակ» բառերը՝ μου Αβραὰμ καὶ Ισαακ: Եթե հոդ դրված լիներ այդ բառերից յուրաքանչյուրի առաջ, ապա նոր միայն կարելի կլիներ խոսել բերված հակափաստարկի եւ Մատթեոսի օրինակների նույնության մասին: Այդ ժամանակ Ծննդոցի այդ հատվածը 70 թարգմանիչները կթարգմանեին այսպես. «իմ նախնիների՝ Աբրահամ-Իսահակի անունը...»:

Շատ հաճախ Եհովայի վկաները միտումնավոր շփոթում են անձ հասկացությունը Աստծո հետ, պնդելով, որ Ս. Գիրքը հեռու է այն գաղափարից կամ ուսմունքից, համաձայն որի Աստված Երեք անձերի միություն է, մինչդեռ Ս. Գիրքը սովորեցնում է, որ գոյություն ունի մեկ Աստված: Եւ բերում են վկայություններ Ս. Գրքից[13]:

Ս. Գիրքն իրոք սովորեցնում է, որ մեկ Աստված կա, բայց այդ ամենեւին չի հակասում Երրորդության վարդապետությանը, քանի որ մենք էլ ենք հավատում, որ մեկ Աստված կա: Իսկ բերված համարները միայն ապացուցում են այդ, եւ դրանցում ամենեւին չի ասվում, որ Աստված մեկ Անձ է միայն[14]:

(Շարունակելի)

ԴԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

12 Հունարենն է. ὁ ἄγγελος ὁ ῥυόμενός με ἐκ πάντων τῶν κακῶν εὐλογήσαι τὰ παιδία ταῦτα καὶ ἐπικληθήσεται ἐν αὐτοῖς τὸ ὄνομά μου καὶ τὸ ὄνομα τῶν πατέρων μου Αβραὰμ καὶ Ισαακ καὶ πληθυνθείησαν εἰς πλῆθος πολὺ ἐπὶ τῆς γῆς. Եբրայերեն բնագիրն էլ ունի նույն կառուցվածքը, ինչ բերված հունարենը:

13 Բ. Օր. Զ. 4, Գաղատ., Գ. 20, Ա. Կորնթ. Ը. 4-6:

14 Մեր դավանանքն է. «Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ, անծին, եւ անսկիզբն, այլ եւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն Սրբոյ: Հաւատամք զԲանն Աստուած անեղ, ծնեալ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ո՛չ յեղոյ եւ ո՛չ կրտսեր, այլ որքա՛ն Հայրն Հայր՝ ընդ նմին եւ Որդին Որդի: Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած անեղ, անժամանակ, ո՛չ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր եւ փառակից Որդւոյ: Հաւատամք զԵրրորդութիւնն Սուրբ՝ մի բնութիւն, մի Աստուածութիւն, ո՛չ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երեւելեաց եւ աներեւութից» (Ժամագիրք):